

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐԸ

Ա. Մ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Դժվար է գտնել թեկուզ մեկ հայ բնաստ, որ զաղափար չունենա որդան կարմիր միջատի մասին: Ավա դուրյունը պատմում է, որ «Արեւելքի հրաշքը» անվանակոչվող որդան կարմիր միջատից ստացված բնական կարմիր քանկաթեր ներկը դեռեւս հայտնի էր Նոյի հետնորդներին: Ավանդությունը պատմում է, որ որդա կարմրի արտադրությունը եղել է հայ թագավորների մենաշնորհը: «Արքայական ծիրանին», որով ներկում էլ արքայական եւ իշխանական զգեստները, համարվում էր ամենագեղեցիկ ներկը:

Տիգրան II-ի թագավորության ժամանակ (95-55 թթ. մեր թվարկությունից առաջ), որպես հավատարմույ յան նշան Հայոց արքայից-արքային, հայ իշխանները իրենց դրոշմների վերին երկզքը ներկում էին որդան կար մով:

Ասորեստանի Սարգոն II-ի թագավորը (մ. թ. ա. 714 թ.) Մուսասիրի Խալդի աստծո տաճարից, որպէս ավար վերցված են որդանով ներկված կարմիր գործվածքները: Ըստ հունական եւ հռոմեական աղբյուրներ (Պլինիոս, I դ.) հին աշխարհում Հայոց երկրից արտահանվող ապրանքների մեջ առաջինը եղել է որդան կարմիրը: Հռոմեական կայսր Ալբեյիանոսը, որ թավավորել է 270-275 թթ. պարսից արքայից նվեր է ստացել որդա կարմրով ներկված բրդե մի գործվածք, որն եղել է Կապիտոլիումի զարդերից եւ Հռոմում Համբողջահամուր զար մանք է առաջացրել:

Արաք Աշխարհագրագետ Ալ-Մուկադասը (905 թ.), խոսելով Դվինի մասին, գրում է. «Այստեղ՝ Հայաստա նում ունեն կըմբռնե որդը, որն ապրում է հողում: Կանայք եւ երեխաները խնամքով դրանք հավաքում են պղնձ աճանների մեջ եւ դնում այն վառարաններում, ուր հաց են թխում»:

Ալ-Ֆակիհը (983 թ.) նշում է «Հայերն ունեն մի տարօրինակ միջատ, որը ոչ մի տեղ չկա, բացի Հայաստա նից, դա կարմիր որդ է, որը հայտնվում է գարնան օրերին, նրանց հավաքում են, եփում, ներկ ստանում ու բուլը ներկում»: X դարի աշխարհագիր Իստախրին վկայում է. «Դվինում գործում են գերազանց գորգեր եւ պատանա ներ, այստեղից էլ արդյունահանվում է Khirmiz, կոչվող հրաշալի ներկը, նրանով ներկում են մահուդը»: Ըստ հայ կազյան բառարանի Khirmiz բառի հայերեն բառացի թարգմանությունը «զինեգույնն» է: Արաք պատմիչ Բեւա- ճորին քաղաքամայր Արտաշատն անվանում է որդանի քաղաք: Որդան կարմրի գովաբանմամբ անմասն չեն մնացել նաեւ հայ պատմիչները: Այսպես՝ պատմահայր Մովսես Խորենացին իր աշխատություններից մեկում նշում է. «Եվ ունի Արարատ լեռունս գետս ու դաշտս պիտանիս եւ որդն սիզաբերեալ արմատոյ, առ ի զարդ կարմրութեանս գունոյ»: Ղազար Փարպեցին (V դար) գրում է «Արարատի ամենացանկալի դաշտը գուր տեղը չն բուսցնում իր վրա եղեգնատեսակ բույսերի արմատները, նրանից դուրս եկած կարմրագեղ զարդարանքի գույնե- րի որդերը օգտասերներին վաստակ եւ գեղեցկություն են ընծայում»:

Միջնադարի ճանապարհորդները գրել են հայկական որդան կարմրի մասին եւ բոլորը հիացմունքով են նշել հայկական գորգերի, կարպետների, շալերի եւ կանանց հանդերձանքի մասին: Հայոց աշխարհահանդես տոների կամ ծեսերի՝ Նավասարդի, Վարդեվառի եւ Ջանգյուղումի օրերին կանանց եւ օրիորդների հագուստի նախընտրելի գույնը վառ կարմիրն էր: Ամենայն Հայոց Աստվածուհուն՝ Անահիտին նույնպես հայերը պատկե- րել են ծիրանագույն հագուստով:

Որդան կարմիրը մեծ կիրառություն է գտել նաեւ եկեղեցիների ներքին խորհրդանշան գործում: Հայկական եկեղեցական գեղանկարչությունը իր բացառիկ ինքնատիպությամբ, խորաքափանցությամբ եւ ստեղծագործա- կան ներշնչվածությամբ, կոմպոզիցիոն եւ զարդանկարչական հորինվածքների գեղեցկությամբ ու համաչափու- յամբ, գույների մաքրությամբ, պայծառությամբ եւ ներդաշնակությամբ նույնպես պարտական է որդան կարմի- րին: Էջմիածնի, Աշտարակի, Վայքի, ինչպես նաեւ Հռոմի Սանտա-Մարիա, Մաջորե, Վենետիկի Մխիթարյան եկեղեցու վեհաշուք սրբապատկերների եւ որմնանկարների մեծ մասը կատարված է որդանից ստացված քան- կարծեր բնական ներկով:

Ըստ Էսթետիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե.Ակոբջանյանի՝ խալալացի հանրահայտ գե- ղանկարիչներ Ռեմբրանդը եւ Միքել-Անջելոն տար գունային տոների համար իրենց կտավներում օգտագործել են որդան կարմրից ստացված ներկը: Հավաստի վկայակոչումներ կան, որ հայ գեղանկարիչներ Հ.Ավագովս- կին, Գ.Բաշինջադյանը եւ Վ.Սուրենյանը նույնպես իրենց ստեղծագործություններում օգտագործել են որդան կարմիրը: Վերջերս Էրմիտաժի ղեկավարության խնդրանքով Պետերբուրգ ուղարկվեց Արարատյան որդանից ստացված ներկի փորձանմուշ դարերի ընթացքում խումացած մի շարք գույնագործների գույները վերականգ- նելու համար: Մպասելիքները միանգամայն արդարացան: Կենդանաբանության ինստիտուտի որդանի լաբորա- տորիայի հետ նրանք պատրաստակամություն հայտնեցին պայմանագրային աշխատանքներ ձեռնարկել բնա- կան կարմիր ներկ ստանալու համար:

Հայ ժողովուրդը իր բազմադարյա գոյության ընթացքում ստեղծել է մշակութային բազմաթիվ արժեքներ, որոնք քաղաքակիրթ աշխարհում լայն ճանաչում եւ գնահատական են ստացել: Շուրջ 25 հազար հին հայկա- կան ձեռնագրեր են պահպանվել ամբողջ աշխարհում, նրանց զգալի մասը կենտրոնացված է Երեսնի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում՝ Ֆեոդոսիայի հավաքածուները՝ կապա- րաններ, ավետարաններ, մենագիր աշխատություններ եւ այլն, նկարագրված են: Հայկական ձեռագրերի գեղանկարչական զարդարանքները բաղկացած են ութը-տասը խորաններից: Խորան է կոչվում ճարտարապե- տական կամար հիշեցնող զարդանկարային հորինվածքները:

Ձեռագրերի ու մանրանկարչության հիմնական հումքը՝ որդան կարմիրից ստացված քանաքը կամ մեղանն է: Մեղանով գրելը համարվել է թագավորների եւ կաթողիկոսների զբաղմունքը: Այդ կապակցությամբ Ներսես Շնորհալիքն նշել է. «թագավորները կարմիր մեղանով են գիր գրում»: Մեղանով նկարագրված ու գրված ձեռագ- րերը երկար դարեր ապրելուց հետո, այժմ էլ պահպանում են իրենց քարմնությունը: Մագաղաթը պատրաստվել է զանազան ընտանի կենդանիների կաշվից խմամքով մաքրելուց, ձգելուց, կոկելուց ու յուղագրկելուց հետո:

Մակայն վերոհիշյալով չի սահմանափակվում որդան կարմրի օգտակար հատկանիշները: Այն անհիշելի ժամանակներից սկսած օգտագործվել է ժողովրդական բժշկության մեջ: Որդանից ստացված ճարպը եւ պատ- րաստուկները օգտագործվել են հողացավերի վերացման համար, այն ունի հակաբորբոքային, հակաբեղմնավո- րիչ եւ ջերմություն իջեցնող հատկանիշներ:

Լինելով մարդու օրգանիզմի համար միանգամայն անվնաս՝ որդան կարմիրը լայն կիրառություն կարող է գտնել նաեւ սննդարդյունաբերության մեջ, գովազուցիչ ջրերի ու օժանելիքի արդյունաբերությունում, ցիտոլո- գիական ուսումնասիրություններում (բջիջի կորիզը լավ ներկվում նպատակով):

Սկսած XIII դարից Արարատյան որդանից ստացվող ներկի արդյունահանումը Հայաստանից զգալիորեն նվազում է: Հիմնական պատճառը, թերեւս, անհիշելի Ժամագին ներկի գյուտի բացահայտումն էր, որը լրիվ կամ մասնակի փոխարինում է բնական կարմիրին: Սկսում է ընկնել նաեւ հայկական գորգերի արժեքը համաշխար- հային շուկայում: Գորգերի վրայից վերանում են զանազան կարմիր նրբերանգները, որոնք այնքան գրավիչ էին դարձնում գորգերն ու բարձրացնում նրանց արժեքը:

Աստիճանաբար Արարատյան որդանից կարմիրի ստացման համար Հայաստանում հայտնի եղանակ- ները ու դեղատոմսերը մոռացվում են: Միայն առանձին եկեղեցականներ որդանը օգտագործում էին վանքում կնիքներ պատրաստելու, աղորարաններ կամ գլխագրեր գրելու նպատակով: Որդան կարմրի գործածությունից դուրս մնալը ակադեմիկոս Համլը բացատրում է այդ ժամանակվա Հայաստանի անմխիթար քաղաքական վի- ճակով:

Մակայն ժողովուրդը չէր մոռանում իրեն այնքան հոգեհարազատ դարձած որդան կարմիրը եւ նույնիսկ երգեր է հորինել այդ թեմայով: Ահա թե ինչպես է գովաբանում XIX դարի գուսան Սյրաիչ Տալյանը (աշուղ Ջա- մալի), օտարերկրացիների կողմից ունեցած արվող որդան կարմիրը.

Իմ պահուստը մի գեղեցիկ արարած է անմման,
Մեր աշխարհում հայտնի բան է, անուն ունի գովական,
Գույնը սիրուն, տեսքը սիրուն, մեծ ու փոքր սիրուն են,
Մենք շատերս նրա գինը չենք հասկանում իսկապես,
Եվ շատ անգամ իբրեւ անպետք անում են ունից կոխան...

1830 թ. մայիսի 19-ին Մոսկվայում կազմակերպված համառոտաստանյան գործվածքեղենի ցուցահան- դեսում ցուցադրվում է նաեւ որդան կարմրից ստացված ներկով ներկված մի շարք մետաքսյա եւ բրդյա գործ- վածքների ու խալիկների նմուշներ: Նրանք արժանանում են ցուցահանդեսը դիտող Նիկոլայ առաջինի ուշադ- րությանը:

XIX դարի սկզբներին Էջմիածնի Մայր տաճարի վարդապետ (հետագայում արքեպիսկոպոս) Սահակ Ծաղկարարը սկսում է զբաղվել որդան կարմրից ներկի ստացման եղանակների վերականգնման հարցերով: Նա քողել է «բազմավեպ» կոչված մի ձեռագիր հիշատակարան, որի մեջ մանրամասնորեն պատմում է իր գործու- նեության մասին: Ավելի ուշ Վրաստանի կառավարապետ Վ.Գ.Ռոզենը դիմում է Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք Հովհաննեսին, որ նա բույլատրի Սահակ Ծաղկարարին մեկնելու որդան կիրմիր միջատի հավաք- ման վայրը եւ դեկավարելու այդ աշխատանքները: Այն ունեւ Ռոզենի պահանջով Սահակ Ծաղկարարը նրան է ուղարկում ներկատու միջատին վերաբերող բոլոր նյութերը: Վերջինս այն ներկայացնում է Կայսերական Գի- տությունների Ակադեմիային: Այդ նյութերի մանրագին ուսումնասիրությունից հետո 1833թ. Հայաստան է գոր- ծուղվում ակադեմիկոս Համլը եւ գրում Արարատյան որդանի մասին առաջին լուրջ գիտական աշխատությունը: Հետագայում որդան կարմրի կենսաբանական եւ կարգաբանական հարցերով զբաղվել է ակադեմիկոս Բրանդը, տալով միջադի առաջին գիտական անվանումը Porphyrophora hameli Brandt (որդան ծիրանաբեր):

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, որդան կարմրի կենսաբանական հարցերով զբաղվեցին Մոսկվայի պետական համալսարանի կենդանաբանության ամբիոնի աշխատակիցները, որոնք 1929, 1930, 1931 թթ. ամռան ամիսներին ուսումնասիրեցին որդանի բազմացման առանձնահատկությունները, հավաքման ձեւերը: Աշխատությունները տպագրվեցին, սակայն գործնական եզրահանգումներ որդանի արդյու- նաբերական բուծման վերաբերյալ չեղան:

Որդան կարմիրը, բնականաբար չէր կարող վրիպել նաեւ հայ միջատաբանների՝ Լ.Բեկ-Հովսեփյանի, Մ.Մակարյանի, Հ.Ավետյանի, Մ.Տեր-Գրիգորյանի, Ա.Հարությունյանի, Խ.Գալֆայանի, Ա.Մուշեղյանի, Գ.Սկրա-

չյանի, Ռ.Սարկիսովի եւ ուրիշների ուշադրությունից: Սակայն մինչեւ վերջերս էլ վերականգնված չէր որդան կարմրից կարմիրն ստացման գաղտնիքը: 1971 թ. ՀՍՄՀ Միմիստրների խորհրդի հատուկ որոշմամբ ԳԱ կենդանաբանության ինստիտուտում ստեղծվում է որդան կարմրի լաբորատորիա, որի առաջ խնդիր է դրվում բացահայտել որդանի տարածման վայրերը, կենսաբանությունը, սաղմնաբանությունը, արհեստական պայմաններում բազմացման նոր եղանակների մշակումը եւ այլն: Որդան կարմրի տարածման վայրերը Արարատյան հարթավայրում բացահայտելու համար կազմակերպվում է հատուկ գիտարշավ, մասնակցությամբ միջատաբան Մ.Տեր-Գրիգորյանի, հողագետներ Ա.Չիթչյանի, Հ.Անանյանի եւ բուսաբան Ա.Բարսեղյանի: Որդան կարմրի այդ ժամանակվա տարածման բոլոր օջախները միասին մտել վերցված կազմում էին 4000: Հետագայում կենդանաբանության ինստիտուտի աշխատակիցներին միացան ԳԱ բուսաբանության ինստիտուտը, Պետական համալսարանը, Պոլիտեխնիկական ինստիտուտը: Կենդանաբանների, բուսաբանների, քիմիկոսների, գենետիկների եւ տունները անհետեւանք չանցան: Մշակվեց անհող (հիդրոպոնիկ) պայմաններում որդանի բազմացման նոր եղանակ: Տարին երկու անգամ որդանի կենսազանգված ստանալու միջոցառում, կարմին ներկի արտադատման բազմացման եղանակներ եւ այլն: Ներկայումս մշակվում են մայրերի լեզվով մատչելի գրքույկներ, ինչպես որդան կարմիր միջատի, նույնպես եւ որդանխտուի վերաբերյալ: Տեղին է հիշատակել հայ նշանավոր հրապարակախոս եւ բանաստեղծ Միքայել Նալբանդյանի 1863 թ. մայիսի 1-ին Պետերբուրգի բանուից հայրենիք՝ եղբորը ուղարկած նամակը.

«Եթե այս վերին աստիճանի թանկարժեք որդերի պատմությունն ու կյանքը լավ ուսումնասիրենք, դրա հետ մանրամասն աճեցնելու եղանակը, ապա կարելի է Արարատյան դաշտի հայ շինականների բարբառով մի փոքրիկ բրոշյուր հրապարակել եւ սովորեցնել նրանց, թե ինչպես պետք է աճեցնել եւ հավաքել որդան կարմիրը»:

Դեռեւս մինչեւ անցյալ դարի կեսերը որդան կարմիրը եւ որդանխտուը Արարատյան հարթավայրում զբաղվող որդանխտուի դաշտը արածացնելուց անմիջապես հետո մշել է, որ գետինը նմանվում էր կարմիր մախշերով պատած արեւելյան գորգի, իսկ ոչխարների ոտերը ներկված էին վառ կարմիր գույնով:

Ներկայումս որդան կարմրի եւ որդանխտուի բնական պոպուլյացիաների ոչ խոշոր օջախներ կարելի է հանդիպել Արմավիրի, Էջմիածնի, Արարատի եւ Մասիսի աղուներում: Վերջին տարիներս ալկալի հողերի մեկտեղման, աղազեղման, ձկնաբուծական լճակների կառուցման եւ գյուղատնտեսական ցանքատարածությունների ընդարձակման պատճառով խիստ կրճատվել են որդան կարմրի տարածման սահմանները եւ փաստապես այն արժեքավոր միջատի գոյությունը: Որդան կարմրի եւ նրա կերաբույսերի տական գյուղերի միջեւ ՀՍՄՀ Միմիստրների խորհրդի հովանավորությամբ առանձնացված է 200 հեկտար հողատարածք արգելավայր:

Գիտությանը հայտնի է կարմիր ներկ՝ կարմին պարզեղ երեք որդաններ՝ Արարատյան կամ հայկական, մեքսիկական եւ լեհական: Ներկատու որդաններից թերեւս ամենաարժեքավորը եւ խոշորը Արարատյանն է: Ծանոթանալով նրա կարգաբանական առանձնահատկություններին: Էգերն անթեւ են, օվալաձեւ, 4-12 մմ երկաձեւ պոչ: Որդանի զարգացման ամբողջ ցիկլը կատարվում է հողում: Ապրում է որդանխտուի եւ եղեգի կոճղարմեջ, 1-5 սմ խորությամբ, որտեղ ձեւավորվում է ձվապարկը: Բամբակաման սպիտակ մոմաթելերից կառուցված ձվապարկի մեջ դրվում է մինչեւ 2000 ձու: Գարնանը՝ ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին, ձմռան ձվերից դուրս եկած թրթուրները կաշում են կերաբույսի կոճղարմատներին ապա ցիտավորվում: Ցիտների միջից դուրս հանելով իրենց կնճիքը եւ մտցնելով բույսի հյուսվածքների մեջ ծծում նրա հյուսքը: Սնման պրոցեսը տևում է 5 ամիս: Մեպտեմբերի սկզբներից 35-40 օրվա ընթացքում, վաղ առավոտվա ժամը 6-ից մինչեւ 10-11-ը էգերը եւ արուները եւ մի քանի օրից հետո սկսում ձվադրել (ձվադրում են մաշկ չբեղմնավորված էգերը): Չարգացման բոլոր փուլերում եւ էգերը, եւ արուները ունեն կարմիր գույն, սակայն ներկ պատրաստելու համար հմուց ի վեր օգտագործվել են միայն էգերը: Որդանը հավաքում են բեղմնավորման համար հողի երես դուրս գալու օրերին: Մեկ հեկտարից կարելի է հավաքել մոտ 40 կգ միջատ: 1 կգ կենսազանգվածից կարելի է ստանալ 50 գ բյուրեղացված ներկ՝ կարմին: Ներկերի քանակությունը կազմում է յուրաքանչյուր կարմրորդի քաշի 5 տոկոսը:

Անհրաժեշտ է նշել, որ որդան կարմրի կենսաբանությունը ավելի լավ է ուսումնասիրված քան որդանխտուին: Որդանխտուը (Aelurodes) դաշտավայրային լեռնային լճակների ընտանիքին պատկանող բազմամյա կոճղարմատավոր խոտաբույսերի ցեղ է, որն իր մեջ ընդգրկում է միայն 4 տեսակ, տարածված Միջերկրածովամերձ երկրներում եւ հարավային Ասիայում: Մեզ մոտ Հայաստանում, ինչպես նաեւ Միջին Ասիայում եւ ԽՍՀՄ Եվրոպական մասում տարածված պոպուլյացիան գորշ-կանաչավուն 20-80 սմ երկարությամբ գետնատարած կամ թթեւ բարձրացող ցողուններով խոտաբույս է: Հասկիկաթեփերը 7-9 ջղով թաղանթաձեղ: Տերեւները թխակապտավուն, կարճ, ամուր՝ փշանման սրված, մերկ կամ թեթեւակի մազոտ: Որդանխտուը աչքի է ընկնում շատ հզոր կոճղարմատով, որը թափանցում է հողի մեջ մինչեւ 2 մետր խորության սնվելով ստորգետնյա աղի ջրերով: Որդանխտուի արմա-

տական սխտեմի օղաչոր քաշը երեք անգամ գերազանցում է վերգետնյա կենսազանգվածին: Որդանխտուը բազմանում է ինչպես վեգետատիվ, նույնպես եւ գեներատիվ եղանակներով: Գերակշռում է վեգետատիվ բազմացումը՝ որը կատարվում է բնական անդալիսի ճանապարհով: Հասուն բույսը տալիս է քաղականին երկար գետնի վրա սողացող ընձուղներ, որոնք հանգույցների սահմաններում արմատակալում են՝ տալով նոր դուստր անհատներ: Որդանխտուի բնական մաքուր համակեցությունները տալիս են մինչեւ 8-9 ցենտներ խոտ մեկ հեկտարից: Խառը համակեցությունները մասնակցությամբ օշանի, շոռանի, բորակաթփի, ուղտաիշի տալիս են 1,5-2 անգամ ավելի կենսազանգված:

Որդանխտուը օժտված է բավարար կերային հատկանիշներով: Բացարձակ չոր նյութի հաշվով որդանխտուը հասկակալման շրջանում պարունակում է 10,8% մոխիր, 11,70% պրոտեին, 2,00% ճարպ, 29,70% թաղանթանյութ եւ 45,80% անազոտ էքստրակտիվ նյութեր: Որդանխտուի վեգետացիոն զարգացման փուլերը (չորք 160 օր) սերտ կերպով համընկնում են որդան կարմրի կենսաբանական հասունացման ցիկլի հետ: Վեգետացիան սկսվում է է ապրիլի վերջերից կամ մայիսի սկզբին, ծաղկում է մայիսի երրորդ տասնամյակում կամ հունիսի սկզբին, սերմակալում՝ հուլիսին: Որդանխտուը շատ հետաքրքիր կենսաբանական առանձնահատկություններ ունի: Նախ՝ այն կարողանում է աճել ամենաչարքակ աղուներում՝ տալով անասնաբուծության համար միանգամայն սպիտակի բուսական կենսազանգված: Որդանխտուը ընդունակ է տերեւների վրա գտնվող հատուկ գեղձերի միջոցով արտադատել աղեր: Թերեւս որդանխտուի ամենախոշոր ժողովրդական նշանակությունը որդան կարմրի համար հիմնական կերամյութ ծառայելն է: Որդան կարմիրը սնվում է ընդամենը երկու բուսատեսակներով՝ որդանխտուով (90%) եւ սովորական եղեգով՝ (10%): Որդանխտուի ստորգետնյա կոճղարմատների կենսաթիրակյալ ուսումնասիրությունները ցույց են տվել երկաթի, կալցիումի, մագնեզիումի եւ մատրիումի պարունակությունը: Կան ենթադրություններ, որ հենց որդանի սնման ընթացքում օրգանիզմ թափանցած երկվալենտ եւ երկվալենտ երկաթի բարձր պարունակությամբ է պայմանավորված կարմրատրդի բուսաբույսի երանգի առկայությունը:

БАРСЕГЯН А. М. - АРАРАТСКАЯ КОШЕНИЛЬ. Араратская или армянская кошениль (вордан кармир) - эндемичное беспозвоночное животное, с незапамятных времен известное из Араратской долины. Краска, получаемая из араратской кошенили, очень высоко ценилась в историческом прошлом. Окрашенные ею ткани, пряжа, ковры были желанной добычей завоевателей. Знаменитый пурпур "цирани" считался привилегией армянского царского дома. "Цирани" назывались также праздничные царские одежды. Армянский царь Трдат Великий предстал на коронацию перед римским императором в пурпурной одежде. Во время бракосочетания с Трдатом III царица Ашхен была одета в "цирани" (Хоренац). Краской из кошенили ставились оттиски патриаршей печати, пурпурным был армянский государственный флаг.

Армянская кошениль играла большую роль в культурно-экономической жизни древней Армении. Сохранившиеся до сегодняшнего дня красочные армянские миниатюры, уникальные книги Матенадарана, настенные церковные рисунки во многом своему существованию обязаны "армянской краске" (так называли ее на древнем Востоке).

Помимо широкого использования "армянского кармина" на Ближнем Востоке, эта краска экспортировалась и в страны Европы, где также пользовалась большим спросом. В конце XIX века в связи с трагическими событиями на территории Армении, а также с изобретением дешевых анилиновых красителей, промысел кошенили был прекращен.